## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 82

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0028-0016 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Գալինա Անդրեեվնա նովիկովաին պատկանող 06-043-0028-0016 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

**ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք, 1փ. թիվ 14**:

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 83

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. մայիսի 26-ի թիվ 550 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետով, հաշվի առնելով Լերմոնտովո համայնքի ավագանու 19 հունիսի 2026 թվականի N21 որոշումը, հիմք ընդունելով Վաղարշակ Վիգենի Պետրոսյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշակ Վիգենի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող ԼՄ Լերմոնտովո համայնքի 06-043-0026-0005 կադաստրային ծածկագրով 0,02679 հա հողամասին կից գտնվող 06-043-0026-0004 կադաստրային ծածկագրով տարանջատված հողամասից՝ 06-043-0026-0016 կադաստրային ծածկագրով 0,02142հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման նպատակային նշանակության հողամասը՝ ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարել Վաղարշակ Վիգենի Պետրոսյանին:

2. Պարտավորեցնել Վաղարշակ Վիգենի Պետրոսյանին համայնքի ֆոնդային բյուջե վճարել 169 646 (հարյուր վաթսուն ինը հազար վեց հարյուր քառասուն վեց) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 84

### 06-043-0101-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՎԵԼ ԱՐՇԱԿԻ ՕՀԱՆՅԱՆԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Արշակի Օհանյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի գրանցամատյան թիվ 3075 և թիվ 163 04.06.2026թ. ժառանգական գործ, որակավորված անձի կողմից կազմված հատակագիծը, Այգեգործի գրքույկը թիվ 52697 Կաթնագործ ընկերության կողմից տրամադրված 01.09.1991թ., ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի թիվ 37-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրենքի ուժով ճանաչել 06-043-0101-0004 կադաստրային ծածկագրի տակ գտնվող "Կաթնագործ" այգեգործական ընկերության կողմից հատկացված 0,0600հա հողամասի նկատմամբ Սամվել Արշակի Օհանյանին իրավահաջորդության կարգով փոխանցված սեփականության իրավունքը:

2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 11.06.2026 թ-ի թիվ 79 որոշումը:

5.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

**Ո Ր Ո Շ Ու Մ**

25 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 85

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 43-րդ հոդվածով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենքգրքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2011 թ-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով "ԷԴՈՒԱՐԴ ԱՊՐԵՍՅԱՆ ՍՄԲԱՏԻ" ԱՁ-ի որակավորման վկայական 0202 2012-05-05/ կողմից ներկայացված չափագրման տեղեկանքը /մուտքագրման ծածկագիր 2026CGEWTS/, ղեկավարվելով համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Փոփոխել Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող 06-043-0228-0049 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,06416հա հողամասի գործառնական նշանակությունը՝ այն գյուղատնտեսական այլ հողատեսքերից փոխադրել 2-րդ կարգի խոտհարքի:

2.Հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 11.06.2026 թ-ի թիվ 77 որոշումը:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ